ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ
«ԼՈՒՍԱՎՈՐ ՀԱՅԱՍՏԱՆ» ԽՄԲԱԿՑՈՒԹՅՈՒՆ

25 նոյեմբերի 2019թ.

Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի
աշխատակազմի ղեկավար – գլխավոր քարտուղար
ՏԻԳՐԱՆ ԳԱԼՍՏՅԱՆԻՆ

Հարգարժա՛ն պարոն Գալստյան,

Հիմք ընդունելով «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետը և 81-րդ հոդվածի 1-ին մասը, ինչպես նաև Ազգային ժողովի աշխատակարգի VIII գլուխը՝ Ազգային ժողովի «Լուսավոր Հայաստան» խմբակցությունը ներկայացնում է գրավոր առաջարկներ Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից ներկայացված և առաջին ընթերցմամբ ընդունված Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին և Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում լրացում կատարելու մասին Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի փաթեթի (*կոդ՝ Կ-288*) վերաբերյալ:

Առդիր՝ 04 թերթ:

Շնորհակալություն համագործակցության համար:

Հարգանքով՝

ԷԴՄՈՆ ՄԱՐՈՒՔՅԱՆ

ԼՈՒՍԱՎՈՐ ՀԱՅԱՍՏԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ
0095 Երևան, Բաղրամյան 19 (+374 11) 513 423
www.brightarmenia.am

ՈՐՈՇՈՒՄ
ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՓԱԹԵԹԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՐԱՎՈՐ ԱՌԱՋԱՐԿՆԵՐ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետը և 81-րդ հոդվածի 1-ին մասը՝ Ազգային ժողովի «Լուսավոր Հայաստան» խմբակցությունն իր 2019 թվականի նոյեմբերի 25-ի նիստում

ՈՐՈՇԵՑ

Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից ներկայացված և առաջին ընթերցմամբ ընդունված Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին և Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում լրացում կատարելու մասին Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի փաթեթի (կոդ՝ Կ-288) վերաբերյալ ներկայացնել գրավոր առաջարկություններ:

126 Է. Մարուքյան _____

125 Գ. Գորգիսյան _____

116 Ա. Խաչատրյան _____

117 Ա. Սամսոնյան _____

118 Հ. Բաբայան _____

119 Ա. Եղիազարյան _____

120 Ա. Կոստանյան _____

121 Կ. Սիմոնյան _____

122 Ս. Գրիգորյան _____

123 Ս. Ալեքսանյան _____

124 Գ. Բաղդասարյան _____

127 Մ. Թանդիլյան _____

128 Է. Անդրեասյան _____

129 Ռ. Ստեփանյան _____

130 Տ. Սիմոնյան _____

131 Հ. Այվազյան _____

132 Ս. Մինասյան _____

0095 Երևան, Բաղրամյան 19 (+374 11) 513 423
www.brightarmenia.am

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ
«ԼՈՒՍԱՎՈՐ ՀԱՅԱՍՏԱՆ» ԽՄԲԱԿՑՈՒԹՅՈՒՆ

25 նոյեմբերի 2019թ.

Հայաստանի Հանրապետության վարչապետ
ՆԻԿՈԼ ՓԱՇԻՆՅԱՆԻՆ

Հայաստանի Հանրապետության
Ազգային ժողովի Պետական-իրավական հարցերի
մշտական հանձնաժողովի նախագահ
ՎԼԱԴԻՄԻՐ ՎԱՐԴԱՆՅԱՆԻՆ

Հարգարժա՛ն պարոնայք,

Հիմք ընդունելով «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետը և 81-րդ հոդվածի 1-ին մասը՝ ներկայացնում ենք հետևյալ առաջարկը Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից ներկայացված և առաջին ընթերցմամբ ընդունված Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին և Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում լրացում կատարելու մասին Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի փաթեթի (կոդ՝ Կ-288) վերաբերյալ.

Առաջարկում ենք Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի 3-րդ հոդվածը շարադրել նոր խմբագրությամբ.

ԼՈՒՍԱՎՈՐ ՀԱՅԱՍՏԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ
0095 Երևան, Բաղրամյան 19 (+374 11) 513 423
www.brightarmenia.am

«***Հոդված 3.*** Օրենսգիրքը լրացնել նոր 223.1-ին և 223.2-րդ հոդվածներով.

Հոդված 223.1. Քրեական միջավայր ձևավորելը կամ դրան նպաստելը

1. Քրեական միջավայրի ավանդույթները, սովորույթները, գաղափարները կամ վարքագծի կանոնները տարածելը, քրեական միջավայրում ընդունված վարքագծի կանոններով կամ գաղափարներով առաջնորդվելը կամ նշված կանոնների, ավանդույթների, սովորույթների կամ գաղափարների պահպանման նկատմամբ հսկողությունը, կարգավիճակով պայմանավորված ազդեցության հիման վրա խնդիրներ լուծելը կամ քրեական միջավայրի հավաքներին մասնակցելը կամ քրեական միջավայրի գործունեության իրագործման համար դրամահավաք կազմակերպելը կամ այդ միջոցով ստացված նյութական օգուտը տնօրինելը կամ քրեական միջավայրի գործունեությանն այլ կերպ նպաստելը՝

պատժվում է ազատազրկմամբ՝ երեքից վեց տարի ժամկետով

2. Սույն հոդվածի առաջին մասով նախատեսված արարքը, որը կատարվել է՝

1) քրեակատարողական հիմնարկում պահվող անձի կողմից,

2) իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով,

3) զինված ուժերում ծառայող զինծառայողի կողմից կամ

4) անչափահասի ներգրավմամբ՝

պատժվում է ազատազրկմամբ չորսից ութ տարի ժամկետով:

3. Սույն հոդվածի առաջին մասով նախատեսված արարքները քրեական հեղինակություն ունեցող անձի կողմից կատարելը՝ պատժվում են ազատազրկմամբ՝ ութից տասներկու տարի ժամկետով:

4. Սույն օրենսգրքի իմաստով քրեական միջավայր է համարվում քրեական աստիճանակարգությամբ ու միջանձնային հիերարխիկ հարաբերություններով օժտված անձանց միավորումը, որը գործում է իր կողմից սահմանված ու ճանաչված վարքագծի հատուկ կանոնների համաձայն, որոնք հակասում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, և որի նպատակն է սպառնալու, հարկադրելու, բռնության, հանցագործությունների կատարման կամ հանցագործությունների կատարմանը հովանավորելու, հանցավոր արարքների կատարմանն այլ անձանց ներգրավելու կամ այլ անօրինական գործողությունների միջոցով լուծելու հանրային

կամ մասնավոր հարցերին առնչվող վեճերը (խնդիրները) կամ ստանալ անօրինական օգուտ կամ այլ առավելություն:

5. Սույն օրենսգրքի իմաստով քրեական հեղինակություն ունեցող անձ է համարվում քրեական միջավայրում առաջնորդական կամ վերահսկողական կարգավիճակից բխող որոշակի ազդեցություն ունեցող անձը:

6. Իր կողմից քրեական միջավայր ձևավորելու կամ քրեական միջավայրին իր մասնակցության մասին իրավապահ մարմիններին կամովին հայտնած և քրեական միջավայրի կողմից կատարված հանցանքի բացահայտմանը կամ կանխմանը նպաստած անձն ազատվում է քրեական պատասխանատվությունից, եթե նրա արարքները այլ հանցակազմ չեն պարունակում:

Հոդված 223.2. Քրեական հեղինակություն ունեցող անձին դիմելը

Քրեական հեղինակություն ունեցող անձին դիմելը՝ վերջինիս կարգավիճակով պայմանավորված ապօրինի ազդեցությունն օգտագործելու նպատակով՝

պատժվում է տուգանքով՝ առավելագույնը քսանապատիկի չափով կամ հանրային աշխատանքներով՝ առավելագույնը երկու հարյուր յոթանասուն ժամ տևողությամբ կամ ազատության սահմանափակմամբ՝ առավելագույնը մեկ տարի ժամկետով:»:

Մեր համոզմամբ՝ սույն խմբագրությունն ավելի է համապատասխանում իրավական որոշակիության սահմանադրական սկզբունքին, ըստ այդմ՝ առաջարկում ենք վերանայել նախագծի 3-րդ հոդվածը՝ ներկայացված հոդվածների բովանդակությանը համապատասխան:

Շնորհակալություն համագործակցության համար:

Հարգանքով՝ **ԷԴՄՈՆ ՄԱՐՈՒՔՅԱՆ**